ԿԻՐԽՈՒ. ԱՄՐՈՑ–ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԻ ՏԵՍԱԿ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ

Միրիամիջագետքյան գրավոր աղբյուրներն առնվազն մ. թ. ա. II հազարամյակի սկզբից հիշատակում են kirhu *(աքադ. բառացի՝ «միջնաբերդ», «ամրացված տարածք») անվամբ բնակավայրի մի տեսակ, որը բնական բլրի վրա գտնվող և միջնաբերդով ամրացված գոտի էր՝ կենտրոնում տաճարով, իսկ դրանից դուրս առանձին տարածվում էր չամրացված արտաքին քաղաքը, որտեղ կուտակվում էր հիմնական բնակչությունը*[1]*: Այն ընդհանուր բնակատեղիի սրբազան գոտին էր և «քաղաք էր քաղաքի մեջ»: Նման տիպի բնակավայրը խորթ էր միջագետքցիներին. նրա ի հայտ գալը Տիգրիսի ու Եփրատի միջին և ստորին հոսանքներում ընկած շրջաններում ակնհայտ օտար ազդեցությունների արդյունք էր: «Կիրխու» էին կոչվում հիմնականում հյուսիսային Միրիայի և հյուսիսային Միջագետքի խուռիական և նույն մշակութային գոտու քաղաքները (Չագար բազար, Նուզի, Ա-ռաքիհա, Կարքեմիշ): Ըստ Լ. Օփենհայմի՝ միջագետքցիների կողմից նույն եզրն էր օգտագործվում Հայաստանի քաղաքները բնորոշելիս (հնագետը նկատի ունի միջին և ուշ ասորեստանյան դարաշրջանի Հայաստանը)*[2]*:*

---

[1] *Հոդվածը գրելու ընթացքում քննարկումների և օգտակար դիտողությունների համար խորին շնորհակալություն եմ հայտնում Հ. Ավետիսյանին, Պ. Ավետիսյանին, Ռ. Բաղալյանին, Ա. Գնունուն, Գ. Թումանյանին, Ի. Կարապետյանին, Ս. Հմայակյանին և Ա. Վարդանյանին:*

Տեքստում նշվող դարաշրջանները թվագրվում են հետևյալ կերպ. վաղ բրոնզ՝ մ. թ. ա. XXXV–XXV դդ., միջին բրոնզ՝ մ. թ. ա. XXV–XVI դդ., ուշ բրոնզ՝ մ. թ. ա. XV–XIII դդ., վաղ երկաթ՝ մ. թ. ա. XII–X դդ., միջին երկաթ՝ մ. թ. ա. IX–VII դդ.: Քննվող դարաշրջանների փուլաբաժանման, թվագրության և պատմամշակութային համատեքստին վերաբերող մանրա-մասների համար տե՛ս Պ. Ս. Ավետիսյան. Հայկական լեռնաշխարհը մ. թ. ա. XXIV–IX դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), Դոկտ. ատեն. գիտական զեկուցում, Երևան, 2014:

[2] A. L. O p p e n h e i m. Ancient Mesopotamia: Portrait of a Dead Civilization. Chicago, 1992, pp. 131–132. *Պետք է նշել, որ «կիրխու» բառը որպես տեղանուն ի հայտ է գալիս Աշուրնաձիրպալ II-ի (մ. թ. ա. IX դ. առաջին կես) արձանագրություններում և վաղուց նույնացվում է Բաբխի երկրի հետ՝ Տիգրիսի վերին հոսանքում (տե՛ս Ա. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանի սեպա-*

Հարց է առաջանում, թե ինչքանո՞վ է գրավոր աղբյուրներով փաստված հիշյալ բնակավայրի տեսակը համապատասխանում հնագիտական տվյալների հիման վրա վերականգնվող պատկերին: Վերջին ժամանակներում մասնագիտական շրջանակներում ավելի է արմատավորվում այն տեսակետը, թե Վանի թագավորության դարաշրջանի ամրոց-քաղաքն իր առանձնահատկություններով ավելի մոտ էր կանգնած խեթա-խուռիական և Հայաստանի ուշ բրոնզ–վաղ երկաթի դարաշրջանի մշակույթների ընդերքում զարգացող, քան միջագետքյան քաղաքի տարբերակին[3]: Ինչպես խեթա-խուռիական, այնպես էլ բրոնզ–երկաթեդարյան և Վանի թագավորության շրջանի Հայաստանի խոշոր ամրոցներն ունեին միջագետքյան քաղաքի նույն գործառույթը (վարչական ու պաշտամունքային կենտրոն՝ տաճարով/պալատով, խոշոր պահեստներով), սակայն, ի տարբերություն վերջինների, դրանց ներսում կենտրոնացված չէր մեծաքանակ բնակչություն: Մասնավորապես, Վանի թագավորության քաղաքային միջավայրը բաղկացած էր կենտրոնական ամրոցից, որը շրջապատված էր չպաշտպանված քաղաքային բնակավայրերով, ոռոգման ջրանցքներով, մշակովի դաշտերով, անտառներով: Բնակչության նման կուտակումը, հիրավի, ավելի մոտ էր բրոնզ–երկաթեդարյան Հայաստանի, քան սիրիամիջագետքյան օրինակին: Մոխրաբլուրների սակա-

---

գրական շրջանի պատմություն, Երևան, 1933, էջ 26–27, 31): Չի բացառվում նաև հասարակ և հատուկ անունների փոխադարձ առնչությունը:

[3] *Հայկական լեռնաշխարհում քաղաքատիպ բնակավայրերի զարգացման վերաբերյալ ընդհանուր առմամբ տե՛ս Ա. Զ ա ր յ ա ն. Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Երևան, 1986, Գ. Ե. Ա ր ե շ յ ա ն, Կ. Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը նախնադարյան համայնական հասարակարգի և պետական առաջին կազմավորումների ժամանակաշրջանում. – Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1996, էջ 13–86, Կ. Հ ո վ հ ա ն - ն ի ս յ ա ն. Ուրարտական ճարտարապետությունը.– նույն տեղում, էջ 87–199, Հ. - Ս ի մ ո ն յ ա ն, Ա. Գ ն ո ւ ն ի. Հայաստանի սոցիալ-քաղաքական իրավիճակը վաղ բրոնզի դարում (ըստ հնագիտական աղբյուրների). – Հայկական լեռնաշխարհը հայոց մշակույթի բնօրրան, Երևան, 2004, էջ 60–70,* Г. Е. А р е ш я н. Вопросы типологии населенных пунктов Армении позднего бронзового и раннего железного веков. – Научные сообщения X. Государственный музей искусства народов Востока. М., 1978, с. 91–108; К. Х. К у ш н а р е в а. Ранние комплексные общества Южного Кавказа. – Древние общества Южного Кавказа в эпоху палеометалла (ранние комплексные общества и вопросы трансформации). СПб., 1997, с. 11–43; R. B i s c i o n e, S. H m a y a k y a n, N. P a r m e g i a n i (eds). The North-Eastern Frontier: Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, v. I. The Southern Shores. – Documenta Asiana VII. Roma, 2002; A. T. S m i t h, The Political Landscape. Berkeley-Los Angeles-London, 2003; A. T. S m i t h, R. S. B a d a l y a n, P. A v e t i s y a n. The Archaeology and Geography of Ancient Transcaucasian Societies, v. I: The Foundations of Research and Regional Survey in the Tsaghkahovit Plain, Armenia. – Oriental Institute Publications, № 134. Chicago, 2009.

վության պարագան ևս խոսում է այս տեսակետի օգտին: Ուշագրավ է, որ նույն իրավիճակն է տիրում նաև Վանի թագավորության ձևավորման սկզբնական գոտում՝ Վանի ավազանում: Այս իմաստով, Վանի թագավորության ամրոցներն ինչ-որ տեղ կարելի է համարել բրոնզ–երկաթեդարյան ամրոցների զարգացման փուլերից մեկը[4]: Հիշարժան է, որ քաղաքային բնակավայրի զարգացման նույն ուղին է վերականգնում Կ. Հովհաննիսյանը նաև Հայասայում[5]:

Այս համատեքստում կցանկանայինք անդրադառնալ կովկասյան տարածաշրջանում քաղաքային բնակավայրի և քաղաքակրթության[6] ձևավորման Վ. Մասոնի կողմից վերջերս առաջ քաշված վարկածին, ինչը նա կոչում է «քաղաքակրթության անցման կովկասյան ուղի»: Ըստ այդմ՝ վաղ կովկասյան հասարակություններին բնորոշ էին հարստության անհավասար բաշխում, ռազմական վերնախավի առկայություն, մեծ մակերես զբաղեցնող, բայց հնագիտական համեմատաբար քիչ տվյալներով ներկայացող բնակավայրեր (որոնք չէին կազմում մոխրաբլուրներ և ստորակարգորեն կենտրոնացված էին ամրոցների շուրջ), հարստության և մարդկային ուժի ներդրում հիմնականում թաղման կառույցների կերտման ժամանակ, որի ընթացքում ծախսված մարդկային ուժը համեմատելի է միջագետքյան տաճարների կառուցման ժամանակ վատնած ուժին: Այս գործընթացները հանգեցրին նախաքաղաքային հասարակության ստեղծմանը, որը, սակայն, չզարգացավ դասական քաղաքի: Այսինքն՝ խոսքը «քաղաքակրթության անցման ոչ ուրբանիստական ուղու» մասին է, որը զուգահեռներ է գտնում, օրինակ, Բալկանյան թերակղզու կամ կենտրոնական Եվրոպայի վաղ երկաթի դարի հնագույն հասարակություններում[7]: Կարծում ենք, որ այս տեսակետը գլխավորապես կիրառելի է հյուսիսային Կովկասի (Մայկոպյան մշակույթի տի-

---

[4] R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani. *Նշվ. աշխ., էջ 364–365, հմմտ.* А. Мартиросян. Раскопки в Головино. – Археологические раскопки в Армении 4. Ереван, 1954, с. 106.

[5] *Կ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 95: Խեթական հիմնական քաղաքները (օր. Բողազքյոյը) գտնվում էին նախալեռնային գոտում և կոթողային համալիրների ամբողջություն էին կազմում՝ բնակչության քիչ հետքերով բուն քաղաքում, ինչը զուգահեռներ է գտնում առավելապես բրոնզի և երկաթի, ինչպես նաև՝ Վանի թագավորության շրջանի Հայկական լեռնաշխարհի, քան սիրիամիջագետքյան քաղաքների միջավայրում: Ուշագրավ է, որ նույն իրավիճակն է տիրում հետագայում աքեմենյան Իրանի կենտրոնական բնակավայրերի պարագայում:*

[6] *Քաղաքի հնագիտական սահմանման համար տե՛ս* H. Herzog. Archaeology of the City: Urban Planning in Ancient Israel and its Social Implications. Jerusalem, 1997, pp. 1–16.

[7] В. М. Массон. Кавказский путь к цивилизации: вопросы социокультурной интерпретации. – Древние общества Южного Кавказа в эпоху палеометалла (ранние комплексные общества и вопросы трансформации). СПб., 1997, с. 124–133.

պի) և հարավային Կովկասի ու Հայկական լեռնաշխարհի միջինբրոնզեդարյան հասարակությունների համար: Իրականում լեռնաշխարհի վաղերկրագործական հասարակությունները մինչև վաղ բրոնզի դարի վերջը հիմնականում ընթանում էին առաջավորասիական, ավելի ճիշտ՝ Առաջավոր Ասիայի լեռնային շրջաններին բնորոշ քաղաքային կյանքի զարգացման ուղով: Այստեղ կային մոխրաբլուրներ և բնական բլուրների վրա գտնվող բնակավայրեր այնպիսի ներքին կառուցվածքով, ինչը կարող էր բնորոշ լինել վաղ քաղաքային հասարակություններին: Ոռոգովի երկրագործությունը մասնակի դեր էր խաղում հասարակական կյանքում: Սակայն մ. թ. ա. III հազարամյակի վերջերին այս գործընթացը ներքին և արտաքին տարբեր պատճառներով (բնակլիմայական պայմանների փոփոխություն, տափաստանային ցեղերի արշավանքներ) դադարում է, և միջին բրոնզի դարում արդեն տեսանելի է «կովկասյան ուղու» գերակայությունը: Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում առաջավորասիական և կովկասյան վերոհիշյալ տարբերակները կարծես հավասարապես ազդում են քաղաքային կյանքի զարգացումների վրա, և այդ երկու ճանապարհների համակեցությունից ձևավորվում է Վանի թագավորության քաղաքների զարգացման տարբերակը:

Հայկական լեռնաշխարհի հնագույն հասարակությունների ներքին զարգացման ճանապարհները, հիրավի, տարբերվում էին սիրիա-միջագետքյանից և, ինչպես նշեցինք, մոտենում էին աշխարհագրական/կլիմայական պայմաններով ու մշակութապես հարազատ խեթա-խուռիական աշխարհին: Ինչպես խեթական, այնպես էլ խուռիական հասարակություններն իրենց բնույթով հիմնականում երկրագործ-արհեստավորական էին, որոնցում ոռոգովի երկրագործությունը առաջնային դեր չէր կատարում տնտեսության կազմակերպման բնագավառում[8]: Բնակավայրերը կենտրոնացված էին դաշտավայրերում (որտեղ գտնվում էին քաղաքային համայնքները) և լեռներում (ուր որպես գերագույն կազմակերպություն հանդես էր գալիս տոհմը): Խուռիական հասարակությունը բաղկացած էր ազգակից ընտանեկան համայնքներից, որոնք ունեին իրենց հողային հիմնապաշարը և ղեկավարվում էին նահապետի կողմից: Մի քանի ազգակցական և ոչ ազգակցական համայնքներ կազմում էին մի կազմակերպություն, որը կոչվում էր «բնակավայր» (աքադ. alum*): Բնակավայրերը խմբավորվում էին մեկ կամ մի քանի ամրացված կենտրոնների շուրջ, որոնց կարելի է պայմանականորեն կոչել «քաղաք», որտեղ գտնվում էր տաճարը, ինչպես նաև առաջնորդի ու նրա մերձավորների տները (հմմտ. կիրխուն): Այստեղ էր հավաքվում ավագների խորհուր-*

[8] *Է. Մենաբդեն նման հասարակությունները ճշտիվ անվանում է* «неирригационные общества» (Э. А. М е н а б д е. Хеттское общество. Тбилиси, 1965, с. 132):

դը[9]*: Այդ քաղաքները, որպես համայնական կենտրոններ, առաջանում էին բլուրների վրա և տարածվում դրանցից դուրս*[10]*: Նմանատիպ հասարակական կառուցվածք կարելի է ենթադրել նաև ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի Հայաստանում*[11]*:*

Խեթա-խուռիական աշխարհում հատկապես կարևորվում էր տաճարի և տաճարական տնտեսության դերը, ամպրոպի աստվածության պաշտամունքը, որի վրա հենվում էր պետական գաղափարախոսությունը: Տաճարը («սրբազան տարածքը») այստեղ, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում, պիտի հանդիսանար այն հիմքը, որի վրա կարող էր ձևավորվել քաղաքը: Ճիշտ է, այլ՝ ոչ լեռնային հասարակություններում (օր. Միջագետքում կամ Հունաստանում) ևս տաճարն ուներ նույնատիպ գործառույթ, սակայն լեռնաբնիկների մոտ այն արտահայտվում էր յուրովի: Կենտրոնական բնակավայրերն առաջին հերթին կատարում էին գյուղատնտեսական համայնքի, արհեստների և առևտրի նաև գաղափարական կենտրոնի դեր: Եվ այդ էր պատճառը, որ տաճարական համալիրի առկայությունը կարևոր դրդապատճառ էր այդ տեղում քաղաքային տիպի բնակավայրի առաջացման համար: Այս գործընթացը բավական լավ տեսանելի է հին Փոքր Ասիայում և Հայաստանում ու զուգահեռներ է գտնում կովկասյան լեռնաբնիկների ազգագրական նյութերում: Հիշյալ տարածքներում, սկսած առնվազն մ. թ. ա. II հազարամյակից (թերևս, նաև ավելի վաղ), տաճարները հանդիսանում էին աստվածապետական համայնքներ, ինչպես նաև՝ հասարակական կամ արքայական պաշտամունքային շինություններ: Սրանցից ամենահնագույնը և ամենատարած-

---

[9] И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 45–73; *տե՛ս նաև* Э. А. Менабде. *Նշվ. աշխ., էջ 131–146:*

[10] *Հմմտ. «քաղաք» նշանակող մեհենագիր խեթերեն նշանը, որ բլուր է պատկերում* (A. L. Oppenheim. *Նշվ. աշխ., էջ 131*), *ինչպես նաև՝ հայերենի «բլուր» հիմքով բնակավայրերը (Գ. Թումանյան, բանավոր հաղորդում), որոնց թվում՝ «Դվին»-ը: Հմմտ. նաև խեթ.* šarizziš kurtaš *արտահայտությունը, որ նշանակում է «վերին քաղաք», ի տարբերություն ստորին քաղաքի* (A. L. Oppenheim. *Նշվ. աշխ., էջ 132*)*: Սակայն խեթական տեքստերում կիրխուի հոմանիշը, թերևս, պետք է լինի* gurtas *բառը, որ արտահայտում է «բլուր», «ամրություն», «միջնաբերդ» իմաստը և նախապես նշանակել է «հավաքույթի տեղ», ինչը շեշտում է այդ հասկացության արխայիկությունը (*Э. А. Менабде *Նշվ. աշխ., էջ 145*)*: Այս իմաստով հիշարժան է, որ խեթական «մեծ ժողով»-ի* (pankus) *և նրա հասարակական գործառույթի մասին տվյալները* (В. Г. Ардзинба. Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, с. 62–81) *շատ մանրամասներով համընկնում են Քարաշամբի մեծ դամբանաթմբի արծաթե անոթի պատկերագրության բովանդակությանը* (В. Э. Оганесян. Серебряный кубок из Карашамба. – ИФЖ, 1988, № 4, с. 145–161):

[11] R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani. *Նշվ. աշխ.,* A. T. Smith, R. S. Badalyan, P. Avetisyan. *Նշվ. աշխ.*:

վածը աստվածապետական համայնքն էր, որից հետագայում առաջացան քաղաքական տարբեր կազմակերպություններ: Երկրագործական գոտիներում, տոհմային համակարգի անկման և տարածքային համայնքների ձևավորման ժամանակաշրջանում, կազմակերպչական կենտրոնն ու պաշտամունքային կենտրոնը (այսինքն՝ գյուղական և տաճարական համայնքները) համընկնում էին: Երկրագործական բնակչության մեծ մասը կենտրոնանում էր տաճարների շուրջ: Տաճարները ոչ միայն սրբազան, այլև տնտեսական կենտրոններ էին տեղական ինքնավար տարածքային համայնքների համար և զբաղվում էին նաև արտադրությամբ՝ ստեղծելով նյութական բարիքներ: Եվ պատահական չէ, որ դրանցից շատերը առևտրական ճանապարհների վրա էին գտնվում և փոխանակության կենտրոններ էին[12]: Համայնքային հողերը համարվում էին աստվածության, այսինքն՝ տաճարի սեփականությունը, որը մարմնավորում էր համայնքի միասնականության գաղափարը: Սրբարանի շուրջ կենտրոնացած տաճարական համայնքներից այս միավորներն աստիճանաբար աճեցին քաղաքական կազմակերպությունների[13]: Այնպիսի սրբավայրեր ինչպիսիք էին Մոխրաբլուրը, Ազարակը վաղ բրոնզում կամ Մեծամորը, Դվինը և Գեղարոտը ուշ բրոնզ-վաղ երկաթում կարող էին հանդիսանալ հասարակական կյանքի այն կենտրոնները, որոնց շուրջ աստիճանաբար պիտի զարգանար քաղաքատիպ բնակավայրը: Նույն ավանդույթը շարունակվեց Վանի (Տուշպա, Մուծաձիր, Կումենու), Երվանդունյաց և Արտաշեսյան (Աշտիշատ, Անի-Կամախ, Երիզա, Արմավիր) թագավորությունների միջավայրում[14]: Այս տեսանկյունից պատահական չէ, որ կիրխուն տարածվում էր նախնառաջ տաճարի շուրջ:

---

[12] *Ուշագրավ է, որ խեթ.* happira *բառը միաժամանակ նշանակում է և՛ «քաղաք», և՛ «շուկա»:*

[13] А. Г. Периханян. Храмовые объединения Малой Азии и Армении. М., 1959, с. 5–7, 12, 60, 80; Э. А. Менабде. *Նշվ. աշխ., էջ 146–154: Ազգագրական զուգահեռների համար տե՛ս* В. В. Бардавелидзе. Земельные владения грузинских святилищ. – «Советская этнография», 1949, № 1, с. 92–109.

[14] *Քաղաքային բնակավայրերի ձևավորման ընթացքում սրբարան-տաճարների կենտրոնական նշանակության և այդ ավանդության պահպանողականության մասին Վանի թագավորության, անտիկ և միջնադարյան շրջանում տե՛ս Ա. Զարյան. նշվ. աշխ.: Վանի թագավորության տաճարների և տաճարական քաղաքների մասին տե՛ս Ս. Գ. Հմայակյան. Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 65–74: Խեթական սրբազան քաղաքների (Արինա, Ներիկ, Ցիպլանտա) համանման գործառույթի մասին տե՛ս* Э. А. Менабде. *Նշվ. աշխ., էջ 147: Ա. Պետրոսյանը Արմավիրի տիպի տաճար-քաղաքը, որի ակունքները գնում են բրոնզ-երկաթի դարաշրջան, դիտարկում է Արևելյան Հայաստանում խեթական մշակութային ենթաշերտի առկայության համակարգում (Ա. Պետրոսյան. Խեթերենի հետքեր Հայկական լեռնաշխարհի արևելքում և հարավ-արևելքում, Խալդյան զորությամբ... – Հոդվածների ժողովածու՝ նվիրված Բ. Պիոտրովսկու 100-ամյակին, Երևան,*

Ամփոփելով մեր խոսքը՝ նշենք, որ ի դեմս կիրխուի գործ ունենք Առաջավոր Ասիայի լեռնային (հիմնականում խեթա-խուռիական և հայաստանյան տիպի) հասարակություններին բնորոշ քաղաքային ամրոց-բնակավայրի որոշակի տեսակի հետ: Կարելի է ենթադրել, որ «կիրխու» ասելիս միջագետքցիները նկատի են ունեցել «կիկլոպյան»[15] տիպի ամրոց-բնակավայրերը (նախնառաջ՝ վերջիններիս յուրահատուկ լանդշաֆտի կազմակերպման ձևը/համակարգը և ապա՝ ճարտարապետությունը): Աստիճանակարգության սկզբունքով (նախա)լեռնային շրջաններում[16] գտնվող այս ամրոց-բնակավայրերը (որոնց միջև բնակվում էր հասարակ բնակչությունը), ի տարբերություն սիրիամիջագետքյան բնակավայրերի, առավելապես լրացնում էին լանդշաֆտը պաշտպանական նպատակներով, քան վերափոխում այն: Այս ամրոցները հիմնականում բնորոշ են լեռնաշխարհի կենտրոնահյուսիսային (Սևան, Վան, Ուրմիա լճերի շուրջ), բայց նաև արևմտյան (Ծոփք – Փոքր Հայք) և հարավային (Աղձնիք, Կորդուք) շրջաններին. հարավային սահմանը Կորդվաց աշխարհն է, հյուսիսայինը՝ Թռեղքը, արևելյանը՝ Փայտակարանի լեռնային գոտին, արևմտյանը՝ Ծոփքը: Դրանք ի հայտ են գալիս միջին բրոնզի դարի վերջերին, ծաղկման ժամանակաշրջանը ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերն են՝ կենտրոնահյուսիսային շրջաններում և վաղ երկաթի դարը՝ արևմտյան ու հարավային շրջաններում: Լեռնաշխարհից դուրս նման, բայց ոչ նույնական համակարգեր հայտնի են ուշ բրոնզի և վաղ երկաթի դա-

---

2010, էջ 65–77): Բրոնզ-երկաթեդարյան Արմավիրի մասին տե՛ս И. Карапетян, Ж. Хачатрян, А. Канецян. Доурартский Армавир. – ИФЖ, 2004, № 2, с. 254–275.

[15] *Այս եզրն առաջին անգամ օգտագործել է Հ. Շլիմանը՝ միկենյան ճարտարապետությունը բնորոշելու համար* (H. Schliemann. Mykenae. Darmstadt, 1964, S. 3): *Հայերեն «աչկատարեան» տարբերակն առաջարկել է Ատրպետը (տե՛ս Ատրպետ. Շիրակի աչկատարեան (կիկլոպյան) ամրոցներ. – «Ազգագրական հանդես», - 25/2, 1913, էջ 165–188):*

[16] *Արևելյան Հայաստանի համար տե՛ս Գ. Ե. Արեշյան, Կ. Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ.,* Г. Е. Арешян. *Նշվ. աշխ.,* R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani. *Նշվ. աշխ.*, A. T. Smith, R. S. Badalyan, P. Avetisyan. *Նշվ. աշխ., Գ. Ա. Միքայելյան. Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները. – Հայաստանի հնագիտական հուշարձանները, - 1, Երևան, 1969,* Г. Расулоглы. Циклопические сооружения Азербайджана. Баку, 1993. *Արևմտյան Հայաստանի համար տե՛ս* A. Çilingiroğlu. An Urartian Fortress in Diauehi: Umudum Tepe (Kalor Tepe). – Anadolu Araştırmaları, 1980, № VIII, pp. 195–204; K. KΦroğlu. Urartu krallığı dΦneminde Elazığ (Alzi) ve çevresi. Istanbul, 1996; O. Belli. Research on the ‘Giants’ Houses’ in the South of Van Lake. – Istanbul University’s Contributions to Archaeology in Turkey, 1932–2000. Istanbul, 2001, pp. 346–351; O. Belli, E. Konyar. Early Iron Age Fortresses and Necropolises in East Anatolia. Istanbul, 2003; V. Sevin. Pastoral Tribes and Early Settlements of the Van Region. – A View from the Highlands: Archaeological Studies in Honour of Ch. Burney. Leuven-Paris-Dudley, 2005, pp. 179–203.

բաշրջաններում, հյուսիսում՝ Կովկասյան լեռների և Նախակովկասի շրջաններում, հարավում՝ հյուսիսային Միջագետքի/Սիրիայի լեռնային գոտում, արևմուտքում՝ տարածվում են ընդհուպ մինչև Կապադովկիա և ավելի հյուսիս՝ խեթերի ու կասկերի բնակեցման գոտում, իսկ արևելքում՝ դադարում են գոյություն ունենալ Կասպից ծովից արևմուտք ընկած դաշտավայրային շրջաններում: Զուգահեռներ են նկատվում նաև միկենյան մշակույթի «կիկլոպյան» ամրոցների հետ[17]*: Ընդ որում, «զուգահեռ» ասելիս, հիմնականում նկատի ունենք տարածքի կազմակերպման նույնությունը. ինչ վերաբերում է ամրոցների «կիկլոպյան» շարվածքին, ապա լեռնաշխարհից դուրս դրանք բնորոշ են միայն արևմուտք ընկած շրջաններին և բացակայում են հարավ, հյուսիս ու արևելք ընկած տարածքներում:*

Այնուամենայնիվ, Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան «կիկլոպյան» ամրոցներն ունեն առանձնահատկություններ, որոնք բնորոշ են միայն լեռնաշխարհին[18]*: Այդ առանձնահատկությունները շարունակում են գոյատևել ավելի ուշ ժամանակաշրջաններում*[19]*, ինչը հիմք է տալիս ենթադրելու նմանատիպ*

---

[17] *Հայկական լեռնաշխարհից դուրս նման կառույցների համար տե՛ս* S. Reinhold. Zyklopische Festungen und Siedlungen mit symmetrischem Grundriss: ںberlegungen zu einem Ƒberregionalen PhƤnomen der kaukasischen SpƤtbronzezeit. – Der Schwarzmeerraum vom Ƒneolithikum bis in die FrƑheisenzeit (5000–500 v. Chr.): Kommunikationsebenen zwischen Kaukasus und Karpaten. Rahden/Westf., 2009, S. 97–130; R. Matthews, C. Glatz. The Historical Geography of North-Central Anatolia in the Hittite Period: Texts and Archaeology in Concert. – Anatolian Studies, 2009, № 51, pp. 51–72.

[18] *Դա առաջիններից մեկն ընդգծել է Վ. Բելքը* (W. Belck. Noch einmal der neuentdeckte vorderasiatische Heros “Djinova(i)s” – Zeitschrift fƑr Ethnologie, 1900, № 32, 288–299): *Այդ ամրոց-բնակավայրերը հիմնականում տեղադրված են (նախա)լեռնային, քչերը՝ դաշտավայրային գոտիներում, ունեն քաղաքաշինական և պաշտպանական ռացիոնալ բնույթ: Կառուցված են խոշոր քարաբեկորներով՝ հիմնականում առանց կապակցող շաղախի: Գտնվում են բարձրադիր վայրերում և, ըստ աշխարհագրական առանձնահատկությունների, կարող են դասվել երեք հիմնական տիպի՝ բլուր, սարահարթ ու լեռնային հրվանդան: Կարող են ունենալ մեկից երեք և ավելի ամրություններ, երբ առանձին պարիսպներով տարանջատվում են միջնաբերդը, դարավանդներն ու բնակելի թաղամասերը: Ամրոցները, որպես կանոն, ունենում են ուղղանկյուն աշտարակներ, ինչպես նաև մեկ-երկու, հազվագյուտ դեպքերում՝ մինչև չորս մուտք: Շատերն ունեն միջնաբերդեր և պարիսպներից դուրս գտնվող արտաքին բնակելի թաղամասեր (Գ. Ե. Արեշյան, Կ. Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., Գ. Ա. Միքայելյան. նշվ. աշխ.,* Г. Е. Арешян. *Նշվ. աշխ.*, R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani. *Նշվ. աշխ.*, A. T. Smith, R. S. Badalyan, P. Avetisyan. *Նշվ. աշխ.*):

[19] *Այս մասին տե՛ս* Г. А. Тирацян. Культура древней Армении: VI в. до н. э.– III в. н. э. Ереван, 1988, с. 200; R. Biscione, S. Hmayakyan, N. Parmegiani. *Նշվ. աշխ., էջ 365:*

բնակավայրերի ժառանգական զարգացման մասին: Ինչ վերաբերում է Վանի թագավորության քաղաքին, ապա, ինչպես վերը նշվեց, այն իր ներքին համակարգով ավելի մոտ էր կանգնած Հայաստանի ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան «քաղաքին» (կիրխուին): Եվ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ վաղ երկաթի դարում ողջ լեռնաշխարհում (այդ թվում՝ Վանի ավազանում) գոյություն չունի Վանի թագավորության մշակույթի արտահայտման որևէ նախատիպ (լինի դա կարմիր անգոբապատ խեցեղեն, տաճարի տիպ կամ արվեստի բնորոշ ոճ), և որ ողջ լեռնաշխարհում (այդ թվում՝ Վանի ավազանում) գործ ունենք Վանի թագավորությանը տիպիկ և «կիկլոպյան» ամրոցների ու դրանց բնորոշ նյութական մշակույթի տարրերի համակեցության հետ[20]*, ապա կվերահաստատվի այն միտքը, թե «բիայնական» կոչված և բացառապես կենտրոնական ամրոցներում ու կոթողային դամբարաններում ներկայացված մշակութային համալիրն իր բնույթով զուտ վերնախավային է, իսկ Վանի թագավորությունը՝ բրոնզ – երկաթեդարյան Հայաստանում սկիզբ առած պետականության զարգացման գործընթացի վերջնական արդյունքը՝ ազդված ասորեստանյան վարչական համակարգից: Այս իմաստով, վերադառնալով մեր բուն հարցադրմանը, կարելի է ենթադրել, որ բրոնզ – երկաթեդարյան ամրոց-բնակավայրերը, որոնք շարունակեցին գոյատևել Վանի թագավորության և Երվանդունյաց դարաշրջանում, կարող են գոնե մասնակիորեն ընկալվել որպես հին հայկական քաղաքի զարգացման նախապատմություն*[21]*:*

---

[20] *Վաղ երկաթի դարի Հայկական լեռնաշխարհի բոլոր ենթագոտիները ցուցաբերում են զարգացման նույն օրինաչափությունները, ինչ լեռնաշխարհի հյուսիսային շրջանների համար առանձնացված լճաշեն-մեծամորյան մշակույթը՝ բնորոշ սև-մոխրագույն խեցեղենով, «կիկլոպյան» ամրոցներով և խիստ ռազմականացված հասարակությամբ. Արևելյան Հայաստանի համար տե՛ս* R. S. B a d a l y a n, P. S. A v e t i s y a n. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, v. I: Mt. Aragats and its Surrounding Region. Oxford, 2007. *Արևմտյան Հայաստանի համար տե՛ս* V. S e v i n. The Early Iron Age in the Elazığ Region and the Problem of the Mushkians. – Anatolian Studies, 1991, № XLI, pp. 87–97; B. J. P a r k e r. The Mechanics of Empire: The Northern Frontier of Assyria as a Case Study in Imperial Dynamics. Helsinki, 2001; O. B e l l i, E. K o n y a r. *Նշվ. աշխ., Ա. Վ. Քոսյան. «Արևելյան» և «Արևմտյան» մուշկերի խնդիրը. – ՊԲՀ, 1996, -1–2, էջ 207–220: Բրոնզ-երկաթեդարյան լեռնաշխարհի մշակութային ենթագոտիների բաժանման մասին տե՛ս* A. B o b o k h y a n. Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500–1500 v. Chr. Bd. 1–2. Oxford, 2008, S. 47–52.

[21] *Այս իմաստով հիշարժան է, որ Հր. Աճառյանը հայ. «քաղաք» բառի հնարավոր նախատիպերի շարքում, հիշատակում է նաև աքադ.* kirhu *բառը («ամրություն, բերդ, ամրոց» նշանակությամբ), թեև նա հավանական է համարում այդ հայերեն տարբերակը բխեցնել աքադ.* kalakku*-ից («շրջապարիսպ, պարիսպ, դարավանդ») (Հր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, 1979, էջ 3, 542–543): Ընդ որում, հարկ է նշել, որ*

Վերն առաջ քաշված վարկածը կցանկանայինք ստուգել հյուսիսսիրիական հնագիտական նյութի հիման վրա, մի տարածք, որը, ինչպես ժամանակին նշում էր Բ. Պիոտրովսկին, խիստ էական է Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան զարգացումները հասկանալու համար[22]*: Լեռնաշխարհի բնակավայրերի կառուցվածքի իմաստավորման համար հատկապես կարևորվում են վերին Եփրատի ավազանի, մասնավորապես Ասադի և Թիշրինի ջրամբարների տարածքների ուշբրոնզեդարյան (մ. թ. ա. XV– XIII դդ.) հուշարձանների վերջին շրջանի պեղումների արդյունքները: Խոսքը Կարքեմիշի և Էմարի միջև ընկած տարածաշրջանի մասին է, որտեղ գտնվում են Մունբաքա (Էկալատե), Հադիդի (Ազու), Քիտար (Թիլ Աբնու), Ֆաքուս, Թալ Ֆրայ, Սույուհ Ֆոքանի, Բազի-Բանաթ (Բածիրու) բնակավայրերը: Այս տարածաշրջանը մ. թ. ա. XVI– XIV դդ. մտնում էր Միտանի պետության կազմի մեջ, իսկ մ. թ. ա. XIV դ. կեսերից՝ բաժանվեց Խեթական թագավորության ու Միտանիի միջև: Հիշյալ բնակավայրերը լքվեցին/ավերվեցին մ. թ. ա. XIV– XIII դդ. ընթացքում (հատկապես մ. թ. ա. մոտ 1200 թ.)՝ անհայտ պատճառներով: Դրանցից հայտնի հնագիտական և տեքստային տվյալները վերականգնում են բնակելի տարածության կազմակերպման մի ձև, որ տարբեր է Առաջավոր Ասիայի դաշտավայրային շրջաններից, այդ թվում՝ Սիրիայի առափնյա գոտուն բնորոշ պալատակենտրոն/արքայակենտրոն/խիստ հիերարխիկ հասարակությունների կառուցվածքից:*

Հիշյալ քաղաքային բնակավայրերի հնագիտական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բաղկացած են եղել ամրացված միջնաբերդից (որի կենտրոնում՝ սովորաբար բլրի գագաթին, գտնվել է տաճարը) և միջնաբերդից դուրս գտնվող չամրացված ընդարձակ բնակավայրից. պալատական համալիրները բացակայում են, որովհետև տաճարները և բնակելի տները ծառայում էին նաև վարչական/համայնքային նպատակների (օր. հավաքույթների) համար՝ այսպիսով պակասեցնելով վարչական կառույցներ ունենալու անհրաժեշտությունը և ընդգծելով տվյալ հասարակության աստվածապետական բնույթը: Բնակավայրերը գոյատևում էին մասնավոր գործունեության և առևտրի միջոցով: Ինչ վերաբերում է գրավոր աղբյուրներին, ապա վերջիններս վերականգնում են առևտրականների ու մանր արտադրողների հիմնականում էգալիտար մի հասարակություն՝ սահմանափակ արքայական իշխանությամբ: Բնակավայրերում տիրում էր համայնական վարչակարգ. հիմնական կառավարող մարմինը «ավագների» խոր-

---

կիրխուի գաղափարը, հետևապես նաև բառը, իր ծագումով սեմական չէ (A. L. Oppenheim. *Նշվ. աշխ., էջ 131*), *իսկ նրա ակունքները պետք է փնտրել Միջագետքից հյուսիս ընկած լեռնային ժողովուրդների լեզվամշակութային շերտերում:*

[22] Б. Б. Пиотровский. Материальная культура Армянского нагорья. – Очерки истории армянского изобразительного искусства. Ереван, 1979, с. 12.

հուրդն էր, որը հոգ էր տանում հասարակության հոգևոր և նյութական կարիքների մասին: Բացի այդ, գոյություն ուներ ավելի ցածր դասվող «եղբայրների» խորհուրդ, որը տոհմային կազմակերպություն էր և հավաքվում էր օրենսդրական մասնավոր հարցեր լուծելու համար[23]*: Այս հասարակական կառուցվածքն իր արմատներով առնվազն գնում է միջին բրոնզի դար:*

Վերոհիշյալ պատկերը հստակ տեսանելի է հատկապես միտանիական Բազի բնակավայրի օրինակով, ուր պեղվել են ամրացված միջնաբերդը (որի գագաթին տաճարն էր) և բնակելի տները՝ չամրացված ստորին քաղաքում: Այդ տներում ի հայտ են եկել պահեստներին, արտադրական գործունեությանը, առևտրին, պաշտամունքին վերաբերող տվյալներ: Հատկապես հիշարժան են արհեստավորաառևտրական գործունեության մասին վկայող նյութերը. օր. Կացարան 20-ը ոչ միայն բնակելի, այլև մետաղագործական/ոսկերչական տարածք էր, ինչի մասին են խոսում հայտնաբերված կաղապարները, խարամի և բրոնզե բեկորների մնացորդները: Ոսկերչական արտադրանքի և պաշտամունքի մասին վկայող հնագիտական համատեքստերում հաճախ են հանդիպում կշռաքարեր: Նման տներում էին ժողովներ գումարում «եղբայրների» խորհրդի անդամները, մինչդեռ «ավագների» խորհուրդը հավաքվում էր միջնաբերդի տաճարում, որն իր ուղղանկյուն կառուցվածքով և չափերով գրեթե չէր տարբերվում ստորին քաղաքի մեծ տներից: Բնակավայրն ավերվում է ուշ բրոնզի վերջում[24]*:*

Սիրիական վերին Եփրատի բնակավայրերն, անկասկած, կիրխուներ էին, որոնք տարածքի ու հասարակական կազմակերպման մոդելով էական զուգահեռներ են գտնում Հայկական լեռնաշխարհում: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշյալ տարածաշրջանի բնակավայրերի և հասարակական կարգի տարբերակն ամենևին էլ բնորոշ չէր դասական հինարևելյան հասարակություններին, կարելի է ենթադրել, որ այն հյուսիսային Սիրիա էր ներթափանցել լեռնաշխարհից՝ թերևս խուռիական տարրերի հետ մեկտեղ[25]*: Վերջին շրջանի պե-*

---

[23] *Խեթական զուգահեռների համար տե՛ս* Э. А. Менабде. *Նշվ. աշխ., էջ* 140:

[24] A. Otto. Alltag und Gesellschaft zur Spätbronzezeit: eine Fallstudie aus Tall Bazi (Syrien). – Subartu, № XIX, Turnhout, 2006; A. Otto. Organization of Late Bronze Age Cities in the Upper Syrian Euphrates Valley. – Proceedings of the 5th International Congress on the Archaeology of the Ancient Near East. Madrid, 2008, pp. 715–731. *Հմմտ. նաև* P. Werner. Die Entwicklung der Sakralarchitektur in Nordsyrien und südostkleinasien. München-Wien, 1994; F. Pinnock. Elements of Urbanization in Inner Syria in the Late Bronze Age. – Nuove Fondazione nel Vicino Oriente Antico: Realità e Ideologia. Pisa, 1994, pp. 203–215.

[25] *Այդ ներթափանցումը սկսվել էր դեռևս վաղ բրոնզի և շարունակվել միջին բրոնզի դարում, որի հետևանքով հյուսիսային Սիրիայի ու Միջագետքի շրջաններում ձևավորվել էր մի հասարակություն, որն իր արժեքային համակարգով էական նմանություններ է ցույց տալիս Հայկական լեռնաշխարհի կուր-արաքսյան մշակույթի ընդերքում ձևավորված*

ղումները Հայաստանի այնպիսի բնակավայրերում, ինչպիսին Գեղարոտն է[26]*, բացահայտում են ոչ միայն պատմամշակութային զարգացման (օր. բնակավայրերի համաժամանակյա ծաղկումը և անկումը), տարածության կազմակերպման (կիրխուատիպ բնակավայրերը), նյութական մշակույթի (օր. միտանիական կնիքները), այլն, ինչը մեզ համար ամենակարևորն է, կոնտեքստուալ-վարքագծային (օր. ոսկերչության և կշռման գործընթացի համատեղ հանդես գալը տաճարական համալիրների համակարգում) մակարդակի նույնություններ հյուսիսային Սիրիայի հիշյալ հուշարձանների հետ*[27]*: Այս զուգահեռների թվում կարևոր է նաև այն, որ երկու շրջաններում էլ կենտրոնական բնակավայրը ձևավորվում է նախնառաջ տաճարի և ոչ պալատի*[28] *շուրջ՝ շեշտելով իշխանության աստվածապետական բնույթը*[29]*:*

հասարակությանը (Ch. Burney. Hurrians and Proto-Indo-Europeans: the Ethnic Context of the Early TransCaucasian Culture. – Anatolia and the Ancient Near East, Studies in Honor of T. Özgüç Ankara, 1989, pp. 45–51; M. Kelly-Buccellati. Urkesh and the North: Recent Discoveries. – Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians, № 15, 2005, pp. 29–40; M. Kelly-Buccellati. Andirons at Urkesch: New Evidence for the Hurrian Identity of the Early Trans-Caucasian Culture. – A View from the Highlands: Archaeological Studies in Honour of Ch. Burney. Ancient Near-Eastern Studies, Supplement, № 12. Leuven-Paris-Dudley, 2005, pp. 67–89):

[26] R. Badalyan, A. T. Smith, I. Lindsay, L. Khatchadourian, P. Avetisyan, B. Monahan, R. Hovsepyan. Village, Fortress and Town in Bronze and Iron Age Southern Caucasia: A Preliminary Report on the 2003–2006 Investigations of Project ArAGATS on the Tsaghkahovit Plain, Republic of Armenia. – Archäologische Mitteilungen aus Iran und Turan, 2008, № 40, pp. 59–73.

[27] *Հմմտ.* A. Bobokhyan, R. Badalyan. Late Bronze Age Balance Weights from Gegharot (Armenia). – Austausch und Kulturkontakt im SƉdkaukasus und seinen angrenzenden Regionen in der SpƤtbronze-/FrƉheisenzeit. Langenweiƨsbach, 2012, S. 195–221.

[28] *Այնուամենայնիվ, պետք է նշել, որ հինարևելյան լեզվամտածողության մեջ հաճախ չի նկատվում տարբերություն «տաճար» և «պալատ» հասկացությունների միջև (հմմտ. շումեր.* Լ. GAL *բառը, որ նշանակում է և՛ «տաճար», և՛ «պալատ»): Հմմտ. նաև հին հայ., վրաց. և պարսկ. «տաճար» բառը, որը բացի «սրբարան» իմաստից, ունեցել է նաև «պալատ, արքունիք, շտեմարան» իմաստները (Հր. Աճառյան. նշվ. աշխ., էջ 365): Պալատները հաճախ հանդես են գալիս տաճարների հետ մեկտեղ, իսկ շատ դեպքերում տաճարները պալատական համալիրների բաղկացուցիչ մասն են կազմում նաև Վանի թագավորությունում (տե՛ս Կ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 141, 146):*

[29] *Հիշարժան է, որ հյուսիսային Սիրիայի լեռնային գոտու բնակավայրերը հելլենիստական շրջանում ևս պատկանել են այն նույն տեսակին, ինչը բնորոշ է եղել Փոքր Ասիային ու Հայաստանին, և որոնց կարելի է կոչել «տաճարային քաղաքներ» (հմմտ. Գ. Սարգսյանի* “temple cities of Syria and Asia Minor” *արտահայտությունը՝* G. Kh. Sarkisyan. Babylonian Variant of Hellenism. – 32nd International Congress for Asian and North African Studies. Moscow, 1986, p. 9): *Այս իմաստով շատ հավանական է, որ սկսած առնվազն արտադրող*

Այս նույնություններն առաջին հայացքից կարելի է բացատրել հյուսիսսիրիական շրջանների հետ առկա քաղաքական կամ առևտրական[30] կապերի համատեքստում: Սակայն այդ առնչությունների արմատներն ավելի խորը կարող են լինել՝ արտացոլելով պատմամշակութային այն ներքին հարազատությունը, որ Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան հասարակություններն ունեցել են խուռիական և խեթական աշխարհների հետ:

КИРХУ: РАЗНОВИДНОСТЬ КРЕПОСТИ-ПОСЕЛЕНИЯ В ГОРНЫХ РЕГИОНАХ ПЕРЕДНЕЙ АЗИИ И АРМЯНСКОМ НАГОРЬЕ

АРСЕН БОБОХЯН

Резюме

С начала II тысячелетия до н. э. сиро-месопотамские письменные источники упоминают об одном из типов городского поселения под названием *kirhu* (аккад. «цитадель, укрепленная территория»). Эти крепости-поселения были расположены на естественных холмах, имели храмы и дворцы в своей центральной части. Вне крепости находилось поселение, где проживало основное население. Такие крепости-поселения не были типичны для Месопотамии, и их появление в этом регионе связано с внешними влияниями. Кирху назывались в основном хурритские и смежные центры северной Сирии и Месопо-

տնտեսության ձևավորման սկզբնական փուլերից, Փոքր Ասիայի կենտրոնահարավային, հյուսիսային Սիրիա – Միջագետքի հյուսիսային և Հայկական լեռնաշխարհի շրջանները պատմամշակութային այնպիսի սերտ առնչությունների մեջ են կայացել, ինչը կարելի է սահմանել որպես երկրորդական մակարդակի «մշակութային գոտի»:

[30] *Հայտնի է, որ ուշ բրոնզի դարի առևտրատնտեսական հարաբերություններում Հայաստանն ունի հյուսիսսիրիական/արևելամիջերկրական կողմնորոշում՝ ուղղված դեպի այնպիսի կենտրոններ, ինչպիսին է Ուգարիթը (խեցեղեն, կնիքներ, եռաժանիներ, առաջավորասիական դաշույններ, նիզակի ծայրեր, պաշտպանական զենք, զարդաձևեր և այլն) (Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան. Մեծամոր, Երևան, 1973, էջ 26, 30, Ա. Փիլիպոսյան. Հայկական լեռնաշխարհի կնիքները հինարևելյան կնիքագործության համակարգում, Երևան, 1998, էջ 42–43, 102–105, նույնի՝ Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույնները ու սրերը, Երևան, 1999, էջ 9, 10, 14, 22, 41, 42,* А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 64, 86, 98, 99, 102–105, 108, 301; Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 113, 115, 118, 160, 178, 180, 199–200, 203, 213; Э. В. Ханзадян, Б. Б. Пиотровский. Цилиндрическая печать с древнеегипетской иероглифической надписью из Мецаморского могильника. – ИФЖ, 1984, № 1, с. 59–65):

тамии (Чагар Базар, Нузи, Аррапха). По мнению Л. Оппенгейма, месопотамцы использовали ту же категорию для описания городов Армении средне- и поздне-ассирийской эпох. Кирху представлял собой некую разновидность крепости-поселения, характерную для горных регионов Передней Азии. Такого рода строения могут считаться основой для осмысления урбанистических процессов Армении в течение II – первой половины I тысячелетия до н. э., включая период существования Ванского царства. По системе организации ландшафта «циклопические» крепости Армении бронзового и железного веков могли бы отождествляться с кирху письменных источников.

KIRHU: A TYPE OF FORTRESS-SETTLEMENT IN MOUNTAINOUS REGIONS OF THE NEAR EAST AND THE ARMENIAN HIGHLAND

ARSEN BOBOKHYAN

S u m m a r y

Since the beginning of the 2nd millennium B.C. the Syro-Mesopotamian written sources mention a type of urban settlement by the name of *kirhu* (akkad. “citadel, fortified territory”). These fortifications were situated on natural hills, had temples and palaces in central parts. Outside of them was the settlement, where the main population was concentrated. Such type of fortress-settlements were not typical for Mesopotamia and their appearance here was clearly connected with foreign influences. By the name kirhu were characterized mainly Hurrian and similar urban centres in northern Syria and Mesopotamia (Chagar Bazar, Nuzi, Arrapha). According to L. Oppenheim, the same word was used by the Mesopotamians to designate the towns of Armenia during Middle and Late Assyrian periods. Kirhu was a type of urban fortress-settlement typical for mountainous regions of the Near East, and it could serve as a prototype to characterize urban developments of Armenia during the 2nd – first half of the 1st millennia B.C., including the period of existence of the Van Kingdom. It is suggested that the “cyclopean” fortresses of Bronze and Iron Age Armenia, according to the system of landscape organization, could coincide with kirhus of written sources.